ՆՈՐ-ԴԱՐ

№ 119 ՀՈՐՈՎՈՐԴ ՏԱՐԻ Հուրբաթ 22 Յուլիսի 1887 Հուրբաթ 22 Յուլիսի ՀՈՐՈՎՈՐԴ ՏԱՐԻ № 119

Տարեկան 10 բուբլի, վեց ամսոր՝ 6 բուբլի, երեք ամսոր՝ 3 բ. 50 կ., ամսոր՝ 1 բ. 50 կ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն համագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գումարն 2 կ., բնակիչների համար կէս։

«Նոր-Դար»-ին յուլիսի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 6 բուբլի։

Հասցէների փոփոխելու համար ուղարկում են խմբագրութեանս 7 հատ եօթը կոպէկանոց մարկա։

Հասցէն Тифлисъ, Редакція «Норъ-Даръ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անսպասելի նորութիւն։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Պետերբուրգ։ Աւետարանոց գիւղ։ Նամակ Ամերիկայից.—Ուսար։
Բազաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Ֆէյլիետօն.—(Շուշիից)։
Յայտարարութիւններ։

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսից (13 յուլիսի) մեզ գրում են.—«Շահբազեան Կարապետ էֆէնդին այսօր թրքացաւ Ալի անունով։ Նա կեսարացի է, թրքախօս և անբարոյական մարդ։

Արդէն ութ ամիս է, որ Կրօնական ծողովը նրան խրատում, համոզում էր լետ կանգնելու իւր անբարոյական քայլից։ Նոյնպէս ութ ամիս է, որ նա ասում էր ամեն տեղ. «Ես ցոյց կը տամ հայերին թէ ինչպէս կարելի է mariage civile-ը (քաղաքական ամուսնութիւնը) ներմուծել»։

Լաւ ներմուծեց հիմա։

Կրօնական իշխանութեան ազդու և կորուկ որոշումը միահամուռ համակրութեամբ ընդունեցաւ հայ ժողովրդեան կողմից, որը կուզէր որ կրօնական իշխանութիւնը ցոյց տար իւր հեղինակութիւնը։ Շահբազի արարքը, այսինքն իսլամութիւն ընդունիլը աւելի ևս ամրապնդեց հայոց կրօնական և ազգային զգացումները։

Հայ երիտասարդութիւնը մի ընդարձակ ուղերձ է պատրաստում Ս. Պատրիարքին և Կրօնական ծողովին մատուցանելու համար, խնդրելով որ կնքահայրն էլ պատժուի, նոյնպէս և կրկնամուսնութիւն կատարող քահանան։ Կնքահայրը եղած է Ալէքսանդր Մերէեմ-Փուլի, եղբայր Ագգային ծողովի ատենապետ Յարութիւն Մերէեմ-Փուլիի։

Նոյն ուղերձի մէջ երիտասարդութիւնը պահանջում է, որ Յարութիւն Մերէեմ-Փուլին կամ հրաժարուի ազգային ժողովի ատենապետութիւնից»։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ գրում են.—Մեր վանքերի անհանգստանալի դրութեան մասին արդէն չատ են գրած հայոց պարբերական թերթերում, բայց համարեա թէ ոչինչ չէ գրուած, թէ ինչու գրանց գրութիւնը այդպէս վատ է. միթէ մեր վանքերը այնքան եկամուտ չունեն, որ իրենց պետքերը իրենք հոգան։

Ճշմարիտ է, վանքերի հողերից չատերը անցել են թուրք բէկերի ձեռքերը, կամ զանազան ճանապարհներով հեռացրած են վանքերից չնորհիւ ոչխ և անհնուտ կառավարիչների, որոնք զրկացնում են վանքի հողերում բնակող ժողովուրդին, բայց դեռ ևս այնքան կալուածքներ ունին, որ եթէ կանոնաւոր հսկողութիւն լինի նրանց վերայ՝ մեծ արդիւնք կարող են ստանալ։ Բայց գժբախտաբար համարեա թէ բոլոր վանքերի կալուածքներն էլ երեսի վերայ են թողած և կառավարվում են կամ վանքի միաբանութեան ձեռքով և կամ առանձին կառավարիչ է կարգվում, որին յանձնվում է վանքի բոլոր հողերը որ և իցէ պայմանով, որի մէջ ոչինչ անշուշտ իւր անձնական չահերը աչքից երբէք չէ հեռացնում և որ դիւզացիների համար դառնում է մի գերբնական զօրութիւն ու ոչ հասարակ մահկանացու... Մի այդպիսի վերատեսուչ կարգուած է Դանձասարու վանքի կալուածների վերայ, որի մասին կարճառօտ կերպով կամենում ենք մի քանի խօսք ասել։ Դանձասարու վանքի կալուածների վերայ կառավարիչ նչանակուած է Ղարաղաղու Թեմի և Շուշիի Հայոց հոգևոր դպրանոցի հոգաբարձուների կողմից, որին մինչև 600 բուբլի ռոճիկ է նչանակուած, և նրա ծառայութեան համար տուած են երկու մարդ։ Պարան կառավարչի պարտականութիւնն է կալուածքների վերայ հսկել, եկամուտը հաւաքել և յանձնել ում տարին է։ Պէտք է այս էլ ասած որ պ. կառավարիչը եկամուտից ստանում է և տասանորդ։ Բայց պարոնը չբաւականանալով այդքան առատ վարձատրութեամբ, զանազան միջոցներով ոչնչացնում է վանքի տնտեսութիւնը, ամեն տարի չատ ծանր հիւանդ է, ամեն տարի ստիպուած է չեղուել խսկական չաւիղից և ամպին չրջան դործել, որ կարողանալի հանել վնասել բնակիչներին։ Իմ ընկեր առաջնորդը ասում էր, թէ սա անտառի զանազան տեղերում կտրած ծառերի ամենաչքնչին մասն է կազմում... Բացի դրանից, պարոնը 'ի տարկ է չէ արհամարհում «բահրի» մի պատուական մասը։ Ամեռուաչ արօտատեղերը, ինչպէս ասում են գիւղացիները, տալիս է գիւղացիներին, բայց ստացած դրամից կոնսիստորիային կամ բոլորովին ոչինչ չէ ցոյց տալիս, կամ ցոյց է տալիս մի չնչին մասը... Եթէ վերնք կառավարչի բոլոր գործերը, թերթեր պէտք է լցնենք և ընթերցողների դլխացաւանք լինենք, ուստի թողնում ենք մանրամասնութիւնները տարկաւոր դէպքի համար միայն...

Այժմ այսքանը պէտք է ասած, որ բոլոր եկամուտից կառավարչի և ծառաների ռոճիկը հանած Դանձասարի ստացին կալուածքներից կոնսիստորիան ստանում է 200 բուբլիից ոչ աւելի։

Ի տարկ է, վանքի եկամուտը չնչին կլինի և նրա դրութիւնը աննախանձելի, քանի որ «պառների վերայ գալ հովիւ է նչանակած», ինչպէս մի պատուաւոր անձը համեմատեց կառավարչին։ Ես իրրև օտար այդպէս և ականատես դարձնում եմ այն անձերի ուշադրութիւնը, որոնց պարտականութիւնն է հոգալ Դանձասարու և նրա կալուածքների մասին և լաւ ունինք, որ ուշադրութիւն կը դարձնեն այս գործին ու ստուգելով այս բոլորը իւր տեղը ճշմարտութիւնը կպաշտպանեն և խնդացի անօրէնութիւն կանեն։

—

ՀԱՄՋԱՋԻՄԱՆԻՑ. — Յուլիսի 1-ին էր. պարոն Մ. Կօժինեան իւր տանը ունէր մի քանի հիւրեր,—գիւղի քահանան, մի երկու պատուաւոր անձեր և վերոյիչեալ պարոնը։ Հասկանալի է, որ ճաշի վերայ անպակաս պիտի լինէր դինի և օղին։ Որմէհետև պ. տանուտէրը չափազանց սիրում է կօնեաքանութիւնը, ուստի և բաւական արբեցաւ այդ օրուայ ճաշին և սկսաւ վէճ ճաշին ներկայ եղող ալէքսանդրապօլցի Ե. Տ.-Ղ.-ի հետ։ Պ. Կօնեաքնեանը այդ միջոցին զբաղուած լինելով խանութում իւր գործերով, նրա կինը մէջ է մտնում և աչխատում է խաղաղացնել նրանց և առնում է գիւղի տանուտէրի ձեռից օղիի բաժակը։ Այդ բանը չափազանց զայրացնում է Ե. Ն. Մ.-ին, որ հանելով իւր խէնջարը, չարձակում է կնոջ վերայ՝ կամենալով նրան սպանել, բայց կողմնակի մարդիկ արգելք լինելով, կարողանում է միայն վիրաւորել տանտիկնոջ ձախ ձեռը, որ երկու ամսուայ չղի էր և նոյն գիշերը մէջքը վէր կարուեց (վիժեց) և փչացրեց իւր զաւակը և մինչև այժմ ծանր հիւանդ է։ Գործը չանձնուած է նահանգապետին։

—

ՇՈՒՇԻԻՑ.—Անցեալ չաբաթ մի հայ գտան խեղդուած Խալիալու գետի մէջ։ Հինգ օր դիակը մնացել է ընկած և տէր չէ դուրս եկել. վերջապէս Գայբալի գիւղացիները տարել են և թաղել։ Մի հայ էլ այստեղ արտաքնոցի խողովակը քանդելիս, չանկարծ փլվում է արտաքնոցի աղբը, նրան տակովն անում և տեղնուտեղը սպանում։

—

Մենք իւր ժամանակին հաղորդեցինք, որ Ավճալուում արդէն փորձեր են անում քաղաքին ջրանցքի վերայ, որի աղբիւրի վերակացուներից, թէկուզ էլ մէջ տեղ վերակացու չլինէր, բայց չատ չի վազես, մի քիչ էլ համբերէ, տարին լրանալ և ամեն տուն գլուխ 10—20 բուբլի ջրի փող կտայ, թէկուզ էլ սկզբից հարիւրներ տուած լինի աղբիւրի բերելուն։ Հարկ է համբերել և վերջը տեսնել, դի որ համբերեսցէ խսպառ նա կեցցէ։

—

Ինչի տատ ասեմ, թէ մեր դպրոցի պարոն տէսուչը ամեն կիրակի աշակերտներին քարոզ է խօսում, քարոզի համար տոմսակներ գրում, տները գըրկում, մարդիկ հաւաքում, աշակերտներ ժողովում և իւր հանդիսաւորութեան դասերը խօսում։ Ինչ անէ խեղճը, եթէ կիրակին էլ չը պարապի, ուսուցիչներին և ծնողներին դասեր չը խօսէ, էլ ինչպէս կարող է 350 աշակերտից 150-ը մէկ տեղ մի օրում, տարեկան հանդիսում, դասարանը փոխել։ Տեսնում էք, որքան չաւաչադէմ է դպրոցը։ Այս չէ որ մեր էլ չատ համբերութիւնից է. դի որ համբերեսցէ խսպառ նա կեցցէ։

—

Ինչի տատ ասեմ, թէ մեր դպրոցի տէսուչը ամեն կիրակի աշակերտներին քարոզ է խօսում, քարոզի համար տոմսակներ գրում, տները գըրկում, մարդիկ հաւաքում, աշակերտներ ժողովում և իւր հանդիսաւորութեան դասերը խօսում. Ինչ անէ խեղճը, եթէ կիրակին էլ չը պարապի, ուսուցիչներին և ծնողներին դասեր չը խօսէ, էլ ինչպէս կարող է 350 աշակերտից 150-ը մէկ տեղ մի օրում, տարեկան հանդիսում, դասարանը փոխել։ Տեսնում էք, որքան չաւաչադէմ է դպրոցը։ Այս չէ որ մեր էլ չատ համբերութիւնից է. դի որ համբերեսցէ խսպառ նա կեցցէ։

—

Ինչի տատ ասեմ, թէ մեր դպրոցի պարոն

միջոցին մի քանի խողովակներ ճաքած լինելով, հարկ էր եղել նրանց փոխելու, իսկ չոգեմեքենաները գործել էին կարգին։ Ներկայումս նոյնպէս փորձեր են անում երկաթուղու կայարանի եաեը, քաղաքային երկու պահեստների (բենզինարար) վերայ, որից ջուրը թողնելու են քաղաքային ջրանցքի մնացեալ խողովակները և կոկորն նրանց փորձը։

—

ՇՈՒԱՎԷՐԻՑ մեզ գրում են.—Այս տարի այգիներին բացի կարկուտներից չատ վնասել է և թզ հիւանդութիւնը, իսկ թրթուրը այնքան չատ է, որ խուղի կոչուած անտառի Շրմչուղ մասը բոլորովին կերել ոչնչացրել է. այնպէս որ վիթխարի ծառերը, կարծես ձմեռուան միջոցին լինին։ Թրթուրների չատութեան պատճառով դառնացել են և խոտերը, ուստի և այս տարի այս անտառում վայրենի կենդանիները սակաւ են։

—

Պետական խորհրդի անդամ գեներալադիւտանտ գրաֆ Մ. Լօրիս-Մելիքովը, ինչպէս հաղորդում են «Тифл. Лист.»-ին, մտադիր է աշնան և ձմեռը Թիֆլիսում անցկացնելու։ Ներկայումս նրա համար փնտռում են յարմարաւոր բնակարան։

—

ՇԱՄԱԽԻՑ.—Յուլիսի 10-ին Շամախու թեմի նոր առաջնորդ գերապատիւ Սմբատեան սրբազանը ժամանեց Սաղիանի Ս. Աստիածնոյի վանքը, իսկ յուլիսի 18-ին հատու տեղս։ Սրբազան հօրը խուռն բազմութիւնը ընդունեց եկեղեցու դրան մօտ։

—

Ինչպէս «Бирж. Вѣд.» թերթը լսել է, ժողովրդական կրթութեան մինիստրութեան մէջ մշակվում է տեխնիկական կրթութեան սիստեմայի նոր օրինագիծ, կրթութեան զանազան ատիճանների վերաբերեալ, սկսած տարրին և տարրական արհեստագիտական տեխնիկական ուսումնարաններից, մինչև բարձրագոյն հատատատութիւնները, արևմտեան պօլիտեխնիկական ինստիտուտների նմանութեամբ, որի համար էական վերանորոգութիւններ է պահանջվում և Պետերբուրգի տեխնօլոգիական ինստիտուտի նախագծի մէջ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի.—Այս օրերս ապատեղ ատացուեցաւ պ. Բիւզանդ Նորայրի մի հրատարակութիւնը՝ «Քննասէր, ինքնագրութիւնք Նորայրի» վերնագրով։ Այս գրքույկը՝ որի նպատակը պատմական լեզուաքննութիւնն է ըստ երևոյթին՝ պաշէրոյան հրատարակութիւնների չարքը պէտք է դասած, ըստ որում, յարգելի հեղինակը, մատղրութիւն ունի չարունակ պարբերապէս ի լոյս ընծայել այդ ուղղութեամբ մի կարգ գրքոյկներ։

Այս առաջին պրակը 63 երեսից 15 մասից թուահամարով է հրատարակուած։ Երկրորդ պրակի հրատարակութիւնը կանխօրէն կը ծանուցուի Պօլսի «Փառչ» չաբաթաթերթի մէջ։ Հրատարակութեան էպիդրաֆն է՝ «Որքան կարեմ զայն առնեմ»։ Առաջին պրակի բովանդակութիւնն է՝ Ջեկուցումն, Նախնիք, Եղնըկալ Կողբացւոյ երկու հատուածք սրբագրեալ, Կորիւն վարդապետի հատուած սրբագրեալ, Փաւստոս Բիւզանդ և իւր պատմութիւնն հայոց։ Հետաքրքիր ընթերցասիրաց մի փոքր զազափար տալու համար այս հանդէսի վերայ, ասելորդ չհամարեցինք արտագրել «Ջեկուցումն» և «Նախնիք» խորագրի տակ գրութիւնից մի երկու կտոր, որոնք պարզաբանում են հրատարակութեան նպատակը։

Ջեկուցումն այսպէս է սկսվում.

«Սակաւաւորք են մեր ժամանակի հայերն, որոց ախորժելի ըլլան ազգային լեզուի և գրականութեան խնդրոց քննութիւնք։ Ի գլուխն այս սակաւաւորաց կրնամք սակն հանդէս, որոյ մէկ նիւթն է հայ բարբառն և հայ մատենագրութիւնն, նիւթ ընդարձակ և ընդարձակ միջոցներու կարօտ։

Հանդիսագիրն՝ որ լուժ չփափաքրաւէս սատարել է թէ՛ ի հայ ազգեաց և թէ յօտարաց, բնաւ որ և իցէ չաւակնութիւն չունի, միայն թէ ամենայն ազատութեամբ պիտի գրէ, ինչ որ պիտի գրէ։

Քննասէրի պրակներն կը գանուին ի դրավաճառանոցի. դին առաջին պրակի է 5 դահեկան (այժմեան դրամի ընթացքի համաձայն 50 կոպէկ)։

Հանդիսիս բովանդակ ջօդուածոց սրպագրութիւնն վերապահեալ է հեղինակին»։

«Նախնիք» խորագրի տակ ի միջի այլոց պ. Բիւզանդացին չատնում է, որ նա նպատակ է ունեցել իւր բոլոր կեանքը նուիրել գրչագրաց սպագրութեան. «Իմ դիտաւորութիւնս էր, գրում է Նորայր, հինգերորդ դարէն մինչև ցվերչատասաններորդն հրատարակել զամենայն հայերէն մատենագրութիւնս հնոց, միջնոց և նորոց՝ ժամանակագրական կարգաւ և վերատին տպագրելով զմիանգամ տպագրեալս». սակայն այս գործը չէ յաջողել պ. Նորայրին և նա չարունակում է. «Բարեաւ մնան ուրեմն գրչագիրք ար որ են և ես զգաղիմ միմիայն տպագրեալ մատենագրութեամբք նախնեաց. «Եթէ ակը յաջողէ որ հատատատիմ ի քաղաքի, ուր որ հայ տպարան կը գտնուի, պիտի հրատարակիմ զիմ մատեանն ՆԱԽՆԻՔ յորում ամփոփած եմ զիմ բովանդակ հետազօտութիւնս, և կը յուսամ թէ այն ամեն հրատարակեալ գործք մեր հին մատենագրաց զորս կրցած եմ հաւաքել և ուսումնասիրել՝ չատ տեղ բոլորովին նոր կերպարանք պիտի ներկայանան»։

Ապատեղ հարկ է ասել, որ պ. Նորայրի պատմական լեզուաքննութեան ձեռնարկած մի քանի կարեոր տեղերը սրանից արդէն չատ վաղուց, եթէ չեմ սխալվում, մօտ 10 տարի առաջ, տեղիս պետական պ. Քեր. Պատկանեանից ուշադրութեան տակ է առնուած. օրինակ՝ Արարատ և Սարարատ բառերի նկատմամբ արդէն բաւականին ընդարձակ խօսած է պ. Պատկանեան Մոսկուայի հայագրի պետական Լմենի մի բացատրութեան առթիւ, որ սխալմամբ Արարատ լեռը խառնում է Սարարատ լեռան հետ, լինելով այն մի թոյլ եզրակացութեան վերայ, որ իբր թէ արտագրողի չանցանքն է եղել հնումը ո տառը Արարատ բառի հետ խառնելում, այն ինչ՝ պատմական վաստերով ապացուցվում է, որ Սարարատ լեռը զուտ թիւն է ունեցած և գրեթե վում է այժմեան վաստպերական նահանգում, այն ինչ Արարատ լեռը որպէս բոլորին ծանօթ է գտնվում է Արարատեան նահանգում և նոյնպէս կոչվում է Մասիս։

Պրօֆեսսոր Պատկանեանի մեկնութիւններից պ. Նորայրի անտեղեակ լինելը կարելի է վերագրել սոկ նրան, որ այդ պատմական հետազօտութիւնները առանձին գրուած լինելով պ. Նորայրը տեղեկութիւն չէ ունեցած, թէ չէ հակառակ դէպքում գէթ մի կերպ միչատակելու էր պ. Պատկանեանի

բազմակողմանի և մանրամասնօրէն դիտական բացատրութիւնները։

—

Այս տարի բարձրագոյն ուսումնարաններից համեմատաբար այլ տարիների հետ փոքր թիւ հայ ուսումնատարաններ եղան. ամենը ութ հոգի։ Ատարատներից չորսը համալսարանականներ են, երկուսը՝ դիմնազիական, երկուսն էլ տեխնօլոգիական բարձրագոյն ուսումնարաններից։ Երաժչտական ուսումնարանից այս տարի ոչ ոք չէ ատարել հայերից. ուստի սկսալ էր լրագրերում հրատարակած այն լուրը, իբր թէ պ. Էքմալեանցը իւր ուսման ընթացքը ատարած էր այս տարի։

Համալսարանականներից մէկը իրատան է պ. Խօջայեան, Նոր-Նախիջևանից, միւսը՝ բնագէտ—Հ. Գարագաշ, երրորդը՝ լեզուագէտ—պ. Փարեմուզեանց և չորրորդը պ. Յով. Բախչեանց՝ արևելագէտ, եթէ միայն կարելի է այսպէս ասել. ըստ որում պ. Բախչեանց այն բաժնումն էր գտնվում, որ սովորում են պարսկերէն, տաճկերէն, արաբերէն, չաղատերէն և այլն։ Իր ցանկութեամբ չորս տարուայ ընթացքում պ. Բախչեանց չաճախած է և սրօֆ. Պատկանեանի հայերէն բաժնի դասախոսութիւններին, որ և չորս տարուայ ընթացքում այստեղ ևս չաջողակ ուսանողներից մէկն է եղած։

Ցանկալի էր, որ պ. Բախչեանց համալսարանը ատարելուց յետոյ իւր մասնագիտութիւնն հանդերձ հայերէն բարձի թող չանէր և աչխատէր ատելի առաջանալու այդ ճիւղի մէջ. մանաւանդ որ այժմ մեր հայ երիտասարդների մէջ խիստ հազուագիւտ է տեսնել որ և է մէկին, որ իրեն նուիրէր դիտութեան այնպիսի մի ճիւղի, որը հալի առաջ նիւթապէս բնաւ աջող ասպարէզ չէ բացանում, բայց որը դիտական աչխատութիւնների տակ՝ չարգելի դիտական անուանն է արժանացնում։

Տևնեալոյդ ուսումնատարաներ են՝ պ. Արչակ Պիճիկեանց, Ախալքալաքից և պ. Լեոն Ղազիեանց, Շուչիից. Զինուորականներից մինն պ. Տէր Յովսէփեանց՝ ատարեց դիմուորական ճարտարապետական ուսումնարանը։

Մի երկու իրատաբան ուսանողներն էլ՝ Ախալքալաքից և Ախալցխայից վերջնական քննութիւնների մի մասը թողած են աչնանը։ Այս տարի ևս գտնուցան ուսանողներ, որոնք իրենց թոյլ պարապմունքների համար ստիպուած եղան թողնել մասնավորական ճեմարանը։

—

Շնորհիւ մի քանի ուսանողների, վերջապէս այս տարի ուսանողական պրատան վիճակը ուշադրութեան առնուեց և հետապէս կարգ ու կանոնի տակ մտաւ։ Այժմ բաւականին մեծ հոգատարութեամբ գրքերը պահպանում է ուսանող պ. Սարգիս Կուկունեանը։ Որպէս հին գրքերը, նոյնպէս և պարբերական հրատարակութիւնները չարունակ կազմարարին են յանձնվում և ստանալուց յետոյ հաչոյի գանկի մէջ առնուելով կանոնաւորութեամբ գարնվում փափաք մի մեծ գրքի պահարանի մէջ։

Այս տարի առհասարակ ուսանողական գործերի մէջ կարգ ու կանոն է սիրում, մանաւանդ երբ մի քանի ուսանողներ ձեռնարկեցին մի կարգ հրատարակութիւնների և ուսանողական գանձի գանձապահ ընտրուեցաւ պ. Նազարեանցը, որի պատասխանատուութիւնը և հաչուապահութիւնը ամեն գովասանքի արժանի է։

—

Վերջերս Պետերբուրգի ուսանողներից ձեռնարկած հրատարակութիւնների հիմներորդ գրքույկն էլ դուրս եկաւ մամուլի տակից։ Այս հրատարակութեան նիւթը գարձեալ բոլորական կեանքից է վեր առած։ Սրա վերնագիրն է՝ «Գօնչօ քուլղար աւազակապետի պատմածը»։ Ժողովրդի համար հրատարակուած այս գրքույկները ընդհանուր առմամբ տպուած է 12,000 օրինակ։ Ինչպէս լսում ենք, չուտով մեծ քանակութեամբ ուղարկուելու են պահազան գրավաճառանոցներին վաճառելու համար։

—

Այս ամառ այստեղ, Պետերբուրգի հայոց եկեղեցում տեղի ունեցաւ մի պակ, որը իւր տեսակի մէջ առաջինն կարելի է համարել, ինչու որ դա ուսանողական չրջանին էր պատկանում։ Թիֆլիսցի հայ երիտասարդը իւր քաղաքացուհու հետ կապուելու մէջ է իսկական երջանկութիւնն գտնում։ Հարսանեաց հանդիսին ներկայ էին սոսկ 9 ուսանող և մի ուսանողուհի։

—

Վերջերս հայերի վերաբերմամբ «Новости» մեծ թերթի մի սխալ լուրի հրատարակումն մեծ իրատամբ խիստ զայրացրեց տեղիս հայերին։

Այդ թերթը յունիս 22 թուահամա-

զրել, չեն նայել միայն կոնսիստորի ցուցակին և այսպէս իրենցից կրակ են գցել խեղճ գիւղացիներին, թէկուզ էլ նրանցից չատերին ազատել և իրենք մի քիչ ծախքի տակ ընկել։ Ինչ անէ հազա այս խեղճ գիւղացին, արտը վեր թողած, ձեռքերը խաչած, պիտի սպասէ, թէ երբ հերթը կը գայ, մեռիքը կը ստանայ, թէկուզ մի քանի բուբլիի տակ անքաչ։ Բայց թող նա էլ մի քիչ համբերէ, դի որ համբերասէ իսպառ նա կեցցէ։

—

Ինչի սուտ ասեմ և հոգիս ալրեմ, թէ մեր չուչիցի մի բարեպաշտ մարդ, որդու վիչատակին, մի քանի տարի սրբանից առաջ, տասը հազար բուբլի փող է կտակում և դրա չատուկ կտակատարներ նչանակում, որպէս դի գումարը անփորձ անտառան բանկի մէջ չահեցնեն և այսօր հոգևոր գործերի մսխեն։ Բայց կտակդի մի ուրիչ որդին, կամ որդու որդին, կտակ չէ, ասում է, այդ փողը գլխովին. եթէ ուզում եք, արէք կէս աննենք, կամ չէ անպատճառ ինձ մաս հանենք։ Յարգելի կտակատարները չատ չեն նայում կտակդի թուտն, և ոչ մի կոպէկ չեն ուզում տալ նրան, երկար տարիներ մրցում են իրար դէմ, բայց խոտովանք լինի, եթէ հոգ. իչխանութիւները, կամ դպրանոցի հոգաբարձութիւնը մէջ տեղ չլինէին, դժուար թէ գործը գլուխ բերէին։ Եւ ահա երկիւ, չգիտեմ թէ միւս օր, մի ուժեղի օր զարձաւ մեր դպրոցների համար,—փառն հազարից քառատուն չորսը հաղիւ ձեռք եկաւ, թէկուզ մնացեալը թուտն բաժին ընկաւ։ Այս մեծ գումարից քսան հազարը բանկումը կը չահուի դպրոցի համար, հինգ հազար բուբլի կը տրուի ջրի անկատ գանձարանին, իսկ մնացեալ տասն և իննն հազարով մի օրիորդական դպրոց կը չինուի և մի փոքրիկ եկեղեցի նրա մօտ։ Բայց այս էլ ասելու է, որ արդէն ունինք դրանց կատակացրած մի պարապ գետին և նրա մէջը՝ քար բուսականին։ Ինչ և իցէ, վիչատակն արդարոց օրհնութեամբ հիշուի և փառքն այս տանը մինչ երկինք լինի։ Ցեսաը ընթերցող, լաւ գործ էլ ունինք, և դեռ համբերենք աւելի լաւին, դի որ համբերասէ իսպառ նա կեցցէ։

—

Ինչի սուտ ասեմ, թէ ամեն ամառ, և հենց այսօր էլ, մեր Շուչին մի գրբախտ է զառնում անհամար եկուորներով։ Նրանք թողնում են տաք երկիրները, Թիֆլիսը, Բագուն, և խուճապած դէպի մեզ վազում, ուսանողութիւն թէ վաճառականութիւն. համալսարանականներ թէ գործակատարներ և հենց գիմնազիստների խումն ակերաններ, և հենց խանութների ագէտ սպասաւորներ, ամեն տեսակից և ամեն գոյնից, բոլորը բոլորը թափվում են մեր այս խեղճ Շուչին, լուսաւորութեան դրօչը ձեռքներին, ազգասիրութեան օձիքից բռնած, իւրաքանչիւրը իւր համազգեստով և բիթը թամքած պէտէկ—ակնոցով, գիչեր ու ցերեկ լուվար են պատում, ամբողջ օրերով տենից դուրս մնում, թթու ջրով գժվում. իսկ խօսած տեղը մարդու չեն հաւնում և իրենք մի մի Շէքսպիր ձանաչում։ Այս էլ լուսաւորութիւն է, ասում են նրանք, և կամ նոր ձեի ազգասիրութիւն։ Բայց չէ նրանք կուզղուին և այդպէս չեն մնալ, և մոռացայ ասել, որ բոլորին չեմ ասել, համ բոլորի նեղութիւնը չեմ կարող տանել։ Կամ թէ թող չնեղանան, մենք ստա չենք ասում, և եթէ նեղանան էլ, թող մի քիչ համբերեն. համբերութիւնն էլ իւր հերթում մի լուսաւորութիւն է, և որ համբերասէ իսպառ նա կեցցէ։

—

Ինչի սուտ ասեմ, թէ մեր քաղաքացիք իրենց փողերին խիստ թչնամի են, թչնամի ասելով չեմանաք թէ նրանք մեծ մեծ գումարներ են նուիրում այս ու այն հիմնարկութեան—

Աստուածաճաչ գործի օգնութեան՝ Ո՛չ, այդ չկարծէք, նրանք այդպիսի բաներին ոչ փող տուող են և ոչ ճանաչող, որովհետև դեռ նրանք չեն սթափուել իրենց անալին չուալ ծախսերից, զուր տեղը փողեր վատնելուց—հարսանիքներին հարիւրներ կամ հազարներ ծախսելուց, աղբիւրների վերայ քէֆեր անելուց։ Քանիցս մեր խեղճ առաջնորդները յորդորներ կարդացին, ծրագիրներ տուին, որ ժողովուրդը խեղճ է, թող աւելորդ ծախքերից ձեռք վերցնէ, մեռելների վերայ ժամանակ չտայ, պատը երեկոյեան ժամը 10-ին կատարեն և չատ ցրուեն, որպէս դի հարսանիքատուները, մինչև լոյս առաւօտ, կոչ չտազան, մկկի տանը չգանգեն, միւսները չչինեն, վերջը կոխ չանեն, իրար դլուխ չճզեն, գինու չիչերը միմեանց կողքին չփչեն և հարսանիքը արիւնով չներկեն... Բայց կոչ ընթերցող, այս ծրագիրների օգուտը իմացող և սրանց հետևող,—դուռ պատասխաններ, որ երբէք չկայ։ Իսկ մեր ծրագիրները.—Նրանք ծալած, մի կողմն են դրած, կամ իւրաքանչիւր տան մի խորչը ընկած։ Հիմա էլ համբերենք.—ատա համբերենք, դի որ համբերասէ իսպառ նա կեցցէ։

—

Այժմ թող չասեն, թէ ձի է, որ ատաչ ակ էկպիսկոպիսի գդակը գլխին, մեղ խրատ է կարդում օրը կէս օրին, կամ գրածները սուտ է գլխովին և կամ գրպարտութիւն չուչեցիներին. կամ թէ թող ասեն, ինձ համար փոյթ չէ և դուռ չհատատատ, ընթերցող, նրանց ասելուն, եթէ որ ամեն գովելին ատում է, ատելին գովում, գարձեալ չհատատատ։ Եթէ որ ասեն մեր քաղաքի լապտերները այնքան լոյս են տալիս, որ մեր աչքերին գիչերը ցերեկ է երևում, չհատատատ ընթերցող։ Եթէ որ ասեն Շուչիի պօսա—հետագրատան կառավարչի բացատրութիւնը՝ «Նոր-Դար»-ի խմբագրին ճիչտ է հիմնովին, չհատատատ ընթերցող։ Եթէ որ ասեն գիւղերի եկեղեցական ուսումնարանները հիմա չատ են, քան անցեալ տարիները, չհատատատ ընթերցող։ Եթէ որ ասեն մեր քժիչկները հարուստ ու աղքատ հիւանդների տունը մի կարգով են գնում, չհատատատ ընթերցող։ Եթէ որ ասեն մեր քահանաները հարուստ ու աղքատ ընտանիքներին միևնոյն կարգով են այցելում, օրէնք կատարում, չհատատատ ընթերցող։ Մի քիչ էլ համբերիր՝ վերջը կը տեսնես. և համբերութիւն ի Տէառնէ խնդրեա, ամէն։

Դիտակ

լում (№ 168) «О чемъ говорятъ» рас-

Ս ա ն կ ա ր ա ն ա յ ի ն ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր

Ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ի ն ա խ ա գ ա հ ո ւ թ ե ա ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բրազիլիայի Դօն-Պեդրօ կայսրը ճանապարհորդում է իր ամուսնու հետ Եւրոպայում գրաֆ դ'Ալկօնտարի անուան տակ ծածկուած։ Նրան ուղեկցում են միայն մի քանի հոգի և յուլիսի 21-ին սպասում էին Վարշավայում։

—Հօլանդական կառավարութիւնը վճռել է ամրացնել Մասսի գիծը Նյոդէնից մինչև Բիւրեմօնդէ։ «Lüttieher Zeitung»ը պնդում է դոնէ, որ այդ գծի ամրացնելը անհրաժեշտ է համարվում սկզբունքով և հօլանդական ինժեներական վարչութեան պատուէր է տրուած այդ ամրութիւնների նախագիծը կազմելու։

—«Times»-ը հաղորդում է, որ Մայնցի տեղապահ զօրքի մէջ մի քանի հոգի ձերբակալուել են «Հայրենասիրական Միութեան» անդամ լինելներուն պատճառով, որ յայնապէս երևան է եկել նրանց իրերը խուզարկելուց, որի միջոցին գտել են մի քանի թղթեր։

—Վեննայում ստացուած լուրերին նայելով, բոլղարական խնամակալութիւնը հաւատացնում է, որ պրինց Կօբուրգը չուտով կը գայ Սօֆիա։ Լուրեր են տարածուած, որ իբր թէ ընդդիմադիր կուսակցութիւնը դաւադրութիւն է պատրաստում խնամակալութիւնը իշխանազուրկ անելու համար։ Բազմաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունեցել։

—Ինչպէս երևում է ռուս թերթերի հաղորդած լուրերից, լօրդ Սալսբիւրիի մինիստրութիւնը զօրաւոր դրութեան մէջ է գտնվում իրլանդական խնդրի պատճառով։ Վերջերս մի քանի տեղեր պատահած պատգամաւորների ընտրութիւններից պարզ երևաց, որ իրլանդական նոր օրինագիծը մի այնքան էլ չատ համակրութիւն չունի ժողովրդի մէջ, մանաւանդ որ դէսիդէնտներն էլ մտադիր են օրինագծի մի քանի կէտերում զիջում անել։ Ասում են, որ լօրդ Սալսբիւրին կը հրաժարուի նախագահութիւնից և իւր տեղը կը զիջանի դեսիդէնտներին։ Նոյնպէս ասում են, որ նոր մինիստրութեան մէջ կը մտնի լօրդ Չերչիլը, իսկ կը հրաժարին Գօշէն, Սմիտը և Մաթիւս։ Վիկտօրիա թագուհին այս օրերս խորհրդակցելու միտք ունի օրիներն և դիսիդէնտների ներկայացուցիչների հետ։ Իսկ օրինները արդէն քանիցս հաւաքուեցան իրենց դրութեան մասին խորհրդակցելու։

—Միացեալ-Նահանգներում այժմ սարսափելի չոգիր են լինում։ Ջերմաչափը ցոյց է տալիս 100—108° Ֆարենհէյտի Ջերմաչափով (46—51° Ցելզիոսի վերայ)։ Շատ տեղեր արեգակի հարուածից մարդիկ են մեռել, որոնց թիւը հաշւում են մօտ 130։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անձնասպանութեան առիթ տուղ պարագա.—Նէապօլում, ուր կարօլինա Օլի, տեսնելով որ իւր նիւթական դրութիւնը չատ խախուտ է և խանդարուած, յուսահատութիւնից ուզեց անձնասպանութիւն գործել և ինքն իրեն վէր դցեց տան պատուհանից փողոց։ Բայց դժբաղդաբար այդ միջոցին փողոցով անցնում է մի պաշտօնաթող մայօր—Ալֆօնս անունով և կարօլինա Օնին ընկնում է նրա ղլխին, որից խեղճը ուղղի ցնցում ստացաւ, իսկ ինքը թեթեակի վէրք։

* * *

Ձաղատանների մխիթարութիւն.—Նիւ-Յօրկի բժիշկներից մինը անցեալները հրատարակել է 600 երեսանոց մի գիրք, որի մէջ աշխատում է ապացուցանել, որ ապագայի, իդէալական, կատարելութեան հասած մարդը չպէտք է գլխի վերայ մազ ունենայ։ Նա իւր տէօրիան հաստատում է բազմաթիւ օրինակներով, յայտարարելով, որ մտաւոր զարգացումը ուղիղ յարաբերութիւն ունի ճաղատութեան աստիճանի հետ։ Այդ բժիշկի կարծիքով կարող չէ մարդ հանճարեղ լինել՝ չատ մազ ունենալով։

* * *

(Մեր երկրի կեանքից)

Պառաւի խորամանկութիւնը.—Մի քանի գողեր դիշերը մտնում են մի տան ներքնայարկը, որտեղ պահած է լինում անկողնում այդ տան պառաւ տատը։ Ցետնելով որ ներքևի հետզհետէ ժողովում են տան իրեղէնները, իսկ տան միւս անդամները վերնայարկում քնած լինելով, չեն լսում, ահա թէ ինչ խորամանկութիւնով զբաղեցնում է ննջողներին։

—«Ա՛խ, մի ջուր, ախ մի ջուր», կրկնում է նա հետզհետէ ձայնը բարձրացնելով։

Գողերից մէկը միւսին ցած ձայնով ասում է.—«Տուր, էղ անիծուածին ջուր, որ ձայնը կտրէ։

—«Ատուած ողորմի քո հօր, Ատուած ողորմի քո հօր»—կանչում է բարձր ձայնով։

Կամենալով պառաւի ձայնը կտրել, գողերից մէկը դնում է նրա բերնում մի քանի չիր։ Պառաւը լիքը բերանով սկսում է բառաչել և կրկնել.

—«Ա՛խ ինչ չոր է, ա՛խ ինչ չոր է։

Գողերը վախենալով, որ նրա ձայնից կը զարթնեն վերի յարկում քնողները, չտապում են հանել նրա բերանից չիրերը, բայց պառաւը նպատակ ընտրած լինելով մի կերպ արթնացնել տանեցոց—«Թրջեցի, տարան, թրջեցի տարան, տարան, տարան, տարան»», կրկնում է հետզհետէ բարձրացնելով ձայնը. տանեցիները վերջի խօսքերի վերայ վայր են թաւիվում և բռնում գողերին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՄՕՍԿՎԱ. 20 Յունիսի։ Այսօր ցերեկը ժամը 4-ը անց 20 վայրկեան իւր Զնամենսկօե կալուածում վախճանեցաւ Մ. Ն. Կատկովը։

Կ. ՊՕԼԻՍ. Ֆ. Դուռը հեռագրեց պրինց Կօբուրգին, որ նա չգայ Բօլղարիա, մինչև որ պետութիւնների մէջ նրա ընտրութեան մասին համաձայնութիւն չկայանայ։

Բօլղարիայում, մանաւանդ Արևելեան Ռումելիայում բուռն վրդովմունք է տիրապետում։

և ոչ էլ դրա համար ժամանակ ունինք. գրաւաճառողները պէտք է իրենք մտածէին այդ մասին։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ երջմիածնի ճեմարանի վկայագիր ունի և մի քանի տարիներ

ՈՒՍՈՒՑԻՉ Է

եղել, կամենում է դասեր ունենալ հայոց գպրոցներում։ Յանկացողները կարող են իրենց պայմաններով դիմել Թիֆլիս՝ պ. Պապեանին, «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

5—4

ՄԱՆՆԿԱՎԱՐԱՑՈՒՀԻ

ՍՕՖԻԱ ԽԻԳԱՆԵԱՆՑ

Սկզբի, Սպանդարեան փողոց, Պարոնդերգիի տունը, № 42.

32—10

ՇՈԳԵՆԱԻԵՐԸ

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Օդեսսա—շաբաթ օրերը երեկոյեան 8 ժ. շրջանառու ընթացքով։

Հէնպշաբթիները երեկ. 4 ժ. ուղղ ընթացքով։

Կ. Պօլիս.—երեքշաբթիները երեկոյեան։

ԲԱԹՈՒՄ ԵՆ ԳԱԼԻՍ

Օդեսսայից.—Ուրբաթ օրերը. առաւօտեան ուղղ ընթացքով։

Երեքշաբթիները կէս գիշերուայ մօտ շրջանառու ընթացքով։

Կ. Պօլսէց.—Շաբաթ առաւօտները։

Վլադիկավկազից դուրս են գալիս.

Ա. Հինգ հոգուտանդ ունեցող կառքը

1) Առ. 7 ժ. գիշերանոցը՝ Պասսանուռում; Թիֆլիս հասնում է միւս օրը երեկոյան 6 ժ.

2) Առ. 9 ժ. գիշերանոցը՝ Մլէթում; Թիֆլիս հասնում է միւս օր երեկոյան 8 ժ.

Բ. Վեց հոգուտանդ ունեցող կառքը

1) Յունիսյ 4 ժ. առանց գիշերելու միւս օրը երեկոյեան 7 ժ. հասնում է Թիֆլիս։

2) Յունիսյ 6 ժ. 30 վ. առանց գիշերելու միւս օրը երեկոյեան 9 ժ. 50 վ. հասնում է Թիֆլիս։

1887-ի մայիսի 15-ից Վլադիկավկազի և Թիֆլիսի մէջ կառային երթևեկութեան հաստատել կարգն է նշանակուած։

Թիֆլիսից դուրս են գալիս

Ա. Հինգ հոգուտանդ ունեցող կառքը

1) Առ. ժ. 7-ին. Գիշերանոցը Գուդաուրի կայարանում. Վլադիկավկազ հասնում է միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

2) Առ. ժ. 9-ին։ Գիշերանոցը Մլէթում. Վլադիկավկազ հասնում է միւս օր ժ. 8-ին։

Բ. Վեց հոգուտանդ ունեցող կառքը

1) Յունիսյ ժ. 4-ին, առանց գիշերելու միւս օրը յունիսյ ժամը 7-ին հասնում Վլադիկավկազ։

2) Յունիսյ ժ. 5-ին, առանց գիշերելու միւս օրը երեկոյեան 8 ժ. հասնում է Վլադիկավկազ։

Երեկոյեները 6—8 ժամը, իսկ չոբեչոբէի և չոբան երեկոյեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։

Ամենայն օր քննվում են ծծմայրների և ծառաների առողջութիւնները և ծաղիկ են կարում։

Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոյեան 60 կոպէկ։

Ընդունելութիւնները անվարձ։

Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.
X—43

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ
ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ
(Երևանեան հրապարակում Ծննդաբերչի տունը.)

Ընդունելութիւնը ամեն օր.

Առաւօտեան 9—10 ժամին Ա. Բախտաւոլ—կանանց և երեխաների հիւանդութիւնների։ 10—12 ժամին Կ. Բախտաւոլ—Ներքին ջղային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւնն. 12—1 ժամին Գ. Քուչարեանց—Արտաքին, վիրաբուժական, աչքի և վեներական (ծածուկ) հիւանդութիւնների։

Երեկոյեները 6—8 ժամը, իսկ չոբեչոբէի և չոբան երեկոյեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։

Ամենայն օր քննվում են ծծմայրների և ծառաների առողջութիւնները և ծաղիկ են կարում։

Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոյեան 60 կոպէկ։

Ընդունելութիւնները անվարձ։

Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.
X—43

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբօրատօրնայա փողոց, № 11)

Յանկացողները, ունենալ իրանց առևտրական գործերի համար, սոյն յունիս ամսում ուսման ընթացքը սաւարած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսվելու են օգոստոսի 25-ից։ Կուրսերի ծրագիր և կանոնները կարելի է ստանալ Թիֆլիսում—«Նոր-Դար»-ի խմբագրատանը, Բագուում—պարոն Գրիգոր Գիլդարեանի մօտ։

X—5

Գ. Ս. ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ ԵՒ Գ. Ռ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑԻ
ՀԱՆՐԱՀԱՇԻՒ
Դասագիրքը (Ալգեբրա)

Բազմաթիւ կարևոր խնդիրներով և հարցերով վաճառվում է Սիքայէլեան կամուրջի վերայ ՏԷր-Ղուկասեանցների մանուֆակտուրային մագազինում № 35 և 36 և Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։

Գրքի գինն է 1 ր. 60 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիմում են. Тифлисъ на Мих. мосту въ магазинѣ Теръ-Гукасовыхъ, Георгію Теръ-Гукасянцу.

10—1

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ
ԲԺԻՇԿ ՄԻՍԱՔ ԱՐԱՄԵԱՆՑ
ՍԱԼԻԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ
ՆԿԱՐԱԳԻՐ
ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ
ԳԻՔՔԸ

ԲԱԶՄԱԹԻԻ ԿԱՐԵՒՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ԱՐՏԱՏՊԱՏ „ՆՈՐ-ԴԱՐ" Ա ՄԵՆՕՐԵԱՑ ԼՐԱԳՐԻՑ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԷԿ

Կարելի է ստանալ Թիֆլիսում—«Նոր-Դար»-ի խմբագրատանը, Բագուում—պարոն Գրիգոր Գիլդարեանի մօտ։

X—5

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ. ԵՐԿՐԻ ԿՕՄՄԻՍԻՕՆԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՊՕ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ
ՄԱՐԴԻԿՆԵՐԻ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՂԲ. ԴՕՎԼԱԹԵԱՆՑՆԵՐԻ

Սրանով յայտնվում է 'ի գիտութիւն պ. պ. գնողների, թէ ամառուան համար ստացուած է ռուսական և արտասահմանի ամենալաւ գործարաններից մեծ քանակութեամբ և վերջին ձևերով կարած ու լաւ յատկութիւն ունեցող այր մարդիկների և երեխաների շորեր։ Մեր փիրման ծախում է բաւականին արժան գնով և երաշխաւորվում է կտորի և կարի համար։

Մագազինում կան ամեն չափսերի շորեր, կայ և արհեստանոց շորերը, եթէ կարիք լինի, յարմարեցնելու և ուղղելու համար։

Իբրև ապացոյց արտասահմանեան ապրանքի, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ներկայ տարուայ մաքսատան պլոմբի վերայ։ Ուսուցիչներին և ուսումնաւարտ աշակերտներին զիջումն է լինում։

Մագազինը գտնվում է. Թիֆլիսում, Դօլգովինսկի պրօսպեկտի վերայ, տուն Միրզոյեանի, նախկին Բելովի, իսկ Բագուում—Քալանթարեանի պասսաժում № № 11 և 12. 25—24

Дозволено цензурою Тифлисъ 21-го Іюля 1887 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. д. № 41.